Հ Ր Ա Մ Ա Ն

31 մարտի 2022թ. Թիվ 143-Լ
ք. Երևան

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կանոնադրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ս.թ. ապրիլի 1-ից Բանկի Հաշվարկադրամարկղային գործառնությունների սակագնի 26-րդ կետով սահմանված՝ անկանխիկ մուտքից գումարի կանխիկ տրամադրման համար սակագինը այսուհետ փոփոխել հետևյալ կերպ.

- ՀՀ դրամով՝ 0.3 %, նվազագույնը 200 ՀՀ դրամ,
- ԱՄՆ դոլարով՝ 2 %, նվազագույնը 1000 ՀՀ դրամ,
- Եվրոյով՝ 1 %, նվազագույնը 1000 ՀՀ դրամ,
- ՌԴ ռուբլով՝ 0.5 %, նվազագույնը 1000 ՀՀ դրամ:

2. Սույն հրամանի 1-ին կետով նշված սակագինը կիրառել նաև յուրաքանչյուր արտարժույթով վարկի կանխիկացման դեպքում՝ անկախ վարկի գումարի չափից:

3. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել 17.03.2022թ. թիվ 127-Լ հրամանը:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Գլխավոր գործադիր տնօրեն՝ Hakob Andreasyan Digitally signed by Hakob Andreasyan Date: 2022.03.31 17:09:03 +04'00' Հակոբ Անդրեասյան